# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր  N 4

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «ՇԱՀԱՐՏ» ՍՊԸ և «ԲԼԵՍԿ ՍՊԸ» կոնսորցիումի միջև 2025թ. հունիսի 19-ին կնքված N ՀՏԶՀ-ԱԲՄ-ԱԾՁԲ-2025/2 ծածկագրով «Կապալային աշխատանքների կատարման» պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան «07» ապրիլ 2026թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և *«ՇԱՀԱՐՏ» ՍՊԸ և «ԲԼԵՍԿ ՍՊԸ» կոնսորցիումը, ի դեմս «ՇԱՀԱՐՏ» ՍՊԸ-ի տնօրեն Գ. Սկրտչյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա և «ԲԼԵՍԿ» ՍՊԸ հ/մ-ն ի դեմս տնօրեն Վ. Մարտիրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու)*, մյուս կողմից, համատեղ կոչվելով՝ կողմեր, հիմք ընդունելով կողմերի միջև 2025թ. հունիսի 19-ին կնքված *ՀՀ Արարատի մարզի «Դիմիտրովի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի, ՀՀ Արարատի մարզի «Այգեստանի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի, ՀՀ Արարատի մարզի «Դվինի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի կառուցման աշխատանքների* պետական գնման N ՀՏԶՀ-ԱԲՄ-ԱԾՁԲ-2025/2 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.16 կետերի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի Հավելված 3-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

4. Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երեք օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ | |
|---|---|---|
| Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ<br>Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,<br>Կ.Ուլնեցու 31<br>ՀՎՀՀ՝00846441<br>Ջափաբաժին 1՝<br>Հ/Հ՝900011058758<br>Ջափաբաժին 2՝<br>Հ/Հ՝900011058766<br>Ջափաբաժին 3՝<br>Հ/Հ՝900011058774<br>Կենտրոնական գանձապետարան | «ՇԱՀԱՐՏ» ՍՊԸ<br>Հասցե՝ ՀՀ, ք.Արտաշատ,<br>Երևան-Երասխ մայրուղի 40<br>ՀՎՀՀ՝04210867<br><br>Հ/հ՝220013332816000<br><br>Բանկ՝«ԱԿԲԱ ԲԱՆԿ»ԲԲԸ,<br>Արարատ մ/ճ | «ԲԼԵՍԿ» ՍՊԸ<br>Հասցե՝ՀՀ,ք.Երևան,<br>Ազատության 24/12<br>ՀՎՀՀ՝00447068<br><br>Հ/հ՝220250123753000<br><br>Բանկ՝«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ,<br>Մալաթիա մ/ճ |
| Գործադիր տնօրեն<br>Սարգիս Բաղինյան<br>---------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | Տնօրեն<br>Գեղամ Սկրտչյան<br>---------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | Տնօրեն<br>Վովա Մարտիրոսյան<br>---------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |